

ՄԱՏՐԻՑԱ

ԱՊՊԱ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻ ՇԱՐՔ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ

Հերթական համար	Իրավիճակային խնդրի նկարագրությունը	Տվյալ իրավիճակում կիրառելի մեթոդաբանությունը
1	Պատահար տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) մասնակցությամբ խաչմերուկում, որտեղ ճանապարհներից մեկը, որով երթևեկել է ՏՄx-ը, համաձայն ճանապարհային երթևեկության կանոնների հանդիսանում է «Գլխավոր ճանապարհ», իսկ մյուս ճանապարհին, որով երթևեկել է ՏՄy-ը, որն է ճանապարհային նշան տեղադրված չի եղել:	ՏՄy-ի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել ՏՄx-ի վարորդին:
2	Պատահար տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) մասնակցությամբ կարգավորվող խաչմերուկում: ՏՄx-ը լուսացույցի կամ կարգավորողի՝ ճանապարհային երթևեկության կանոններով տվյալ իրավիճակի համար թույլատրելի ազդանշանի պայմաններում խաչմերուկ մուտք գործած և խաչմերուկն ազատող տրանսպորտային միջոցն է, ՏՄy-ը՝ լուսացույցի կամ կարգավորողի արգելող ազդանշանը թույլատրող ազդանշանի փոխվելուց հետո խաչմերուկ մուտք գործած տրանսպորտային միջոցը:	ՏՄy-ի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել ՏՄx-ի վարորդին:
3	Պատահար տրանսպորտային միջոցների (այսուհետ՝ ՏՄ) մասնակցությամբ ճանապարհների միևնույն ծածկույթով չկարգավորվող խաչմերուկում: ՏՄx-ի երթևեկության ուղղությամբ որևէ կարգավորող ճանապարհային նշան առկա չէ, իսկ նրա աջ կողմից խաչմերուկ մուտք գործող ՏՄy-ի ուղղությամբ առկա են 2.4 «Զիջեք ճանապարհը» կամ 2.5 «Երթևեկությունն առանց կանգառի արգելվում է» ճանապարհային նշանը կամ 1.13 կամ 1.20 հորիզոնական զճանշումները:	ՏՄy-ի վարորդը պարտավոր է ճանապարհը զիջել ՏՄx-ի վարորդին:
...		